ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«08» սեպտեմբերի 2020 թվական N 137-Ա**

## «ԱՐՄՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի $48^1$-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի «է» ենթակետով, համաձայն Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 17-ի N 109-Ա որոշման «Արմոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած «ՍՔԱՅ ԳՅՈՒՄՐԻ» ծրագրի ենթակառուցվածքների նախագծման և ծրագրի իրականացման աշխատանքները սկսելու համար նախապայմաններ ստեղծելու նպատակով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. «Արմոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր՝ համաձայն հավելվածի:
2. Հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման ժամկետ սահմանել 1(մեկ) տարի, որից 6 (վեց) ամիս՝ նախագծման, 6 (վեց) ամիս՝ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:
3. Հողամասի կառուցապատման իրավունքով օգտագործման տարեկան վարձավճար սահմանել տրամադրվող հողամասի կադաստրային արժեքի 1 (մեկ) %-ի չափով:
4. Կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրման հողամասերը չեն կարող դառնալ գրավի առարկա կամ փոխանցվել երրորդ անձանց օգտագործմանը:
5. Հավելվածում ներառված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում գտնվող հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնելու համար:
6. Ծրագրի իրականացումը փոխըմբռնման հուշագրով ամրագրված ժամանակացույցին համապատասխան ընթացք ունենալու դեպքում՝ վերանայել կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի օգտագործման ժամկետները՝ երկարաձգման նկատառումով:
7. Նախագծմանը և շինարարական աշխատանքներին, հողօգտագործմանը ներկայացվող պայմանները, պահանջները և ծրագրի իրականացման հետ առնչվող այլ հարցերը կարգավորվորել Գյումրի համայնքի ղեկավարի որոշումներով:

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

**Կողմ (25)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա. Ադամյան
Հ. Կարապետյան
Լ. Խաչատրյան
Տ. Հովհաննիսյան
Մ. Սահակյան
Լ. Սանոյան
Վ. Եղիգարյան
Ա. Գրիգորյան
Կ. Միքայելյան
Տ. Փանոյան
Գ. Գրիգորյան
Կ. Թաթարյան
Ս. Աստոյան
Ա. Խաչատրյան
Ռ. Սարգսյան
Ա. Մխիթարյան
Ս.Մարտիրոսյան
Լ. Բարսեղյան
Ա.Վարդանյան
Ա. Գրիգորյան
Ա. Խաչատրյան
Գ. Մաթևոսյան
Ա. Ղարաղազարյան
Հ.Պողոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ ԻՍԿԱԿԱՆԻՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Կ.ԲԱՂԴԱՍՅԱՆ

քաղաք Գյումրի
«08» սեպտեմբերի 2020 թվական

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2020 թվականի սեպտեմբերի 08-ի
Ν 137-Ա որոշման

# Ց Ա Ն Կ

## «ԱՐՄՈՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրվող հողամասերի

| հ/հ | Հողամասի գտնվելու վայրը /հասցեն/ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը /հա/ | Տարեկան վարձավճար ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1. | Արևելյան փողոց N 8/5 | նպատակային նշ.-բնակավայրերի գործառնական նշ.-ընդհանուր օգտագործման | 2500,83 | 20 257 |
| 2. | Գործարանային փողոց N 20 | նպատակային նշ.-բնակավայրերի գործառնական նշ. -ընդհանուր օգտագործման | 59760,60 | 484 100 |
| 3. | Ղարսի խճուղի N 2/11 | նպատակային նշ.-բնակավայրերի Գործառնական նշ. -ընդհանուր օգտագործման | 32514,8 | 263 370 |